ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ընդունելով Կողմերի պետությունների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության կարևորությունը.

հիմք ընդունելով Կողմերի պետությունների միջև համագործակցության դրական փորձը և այն հետագայում բարելավելու, ինչպես նաև փոխըմբռնումն ու բարեկամական համագործակցությունն ամրապնդելու անհրաժեշտությունը.

հաշվի առնելով Կողմերի պետությունների պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց մասնակցությամբ վերակազմակերպումների իրականացման հնարավորության ստեղծման նպատակահարմարությունը.

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության միջև գործընկերային համագործակցության մասին» 2014 թվականի հունիսի 25-ի Հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) 4-րդ հոդվածը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1.

Հուշագիրը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2-րդ հոդվածով.

«Հոդված 2

1) Երկու երկրներում պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց մասնակցությամբ վերակազմակերպումներով (միացում, միաձուլում, առանձնացում,

բաժանում, վերակազմավորում) պայմանավորված պետական գրանցումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

2) Սույն հուշագրի 2-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետական գրանցումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքի՝ համացանցի http://www.e-register.am հասցեում տեղակայված կայքի միջոցով:

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության աշխատակցին հնարավորություն է տրվում e-register.am համակարգի միջոցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում ստացած իրավաբանական անձի (անձանց) մասին տեղեկությունները գրառել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում (այլ մարմնի կողմից պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց մասին առկա տեղեկությունները գրանցամատյանում գրառման կարգով): Սույն կետում նշված գրառումը կատարվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային հայտն ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4) Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց սահմանված կարգով՝ e-register.am համակարգի միջոցով հարկ վճարողի հաշվառման համար չի տրամադրվում: Հարկ վճարողի հաշվառման համար նշված անձինք ստանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված, ինչպես նաև վերակազմակերպման արդյունքում ընդլայնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական գրանցման վկայական (պետական գրանցման վկայականի հերթական ներդիր) գրանցամատյանում տեղեկությունների գրառումից հետո տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

5) Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված, ինչպես նաև վերակազմակերպման արդյունքում ընդլայնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումների համար հիմք հանդիսացած փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը ողջամիտ ժամկետում փոխանցում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը: »

Հոդված 2

Հուշագրի «Հոդված 2», «Հոդված 3», «Հոդված 4», «Հոդված 5», «Հոդված 6» բառերը փոխարինել համապատասխանաբար «Հոդված 3», «Հոդված 4», Հոդված 5», «Հոդված 6», «Հոդված 7» բառերով:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և Հուշագրի անբաժանելի մասն է:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի հոկտեմբերի 25-ին, երկու բնօրինակով, հայերենով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝
Նախարար Արփինե Հովհաննիսյան	Նախարար Արարատ Դանիելյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀՈՒՇԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

ընդունելով Կողմերի պետությունների արդարադատության նախարարությունների միջև համագործակցության կարևորությունը.

հիմք ընդունելով Կողմերի պետությունների միջև համագործակցության դրական փորձը և այն հետագայում բարելավելու, ինչպես նաև փոխըմբռնումն ու բարեկամական համագործակցությունն ամրապնդելու անհրաժեշտությունը.

հաշվի առնելով Կողմերի պետությունների պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց մասնակցությամբ վերակազմակերպումների իրականացման հնարավորության ստեղծման նպատակահարմարությունը.

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության միջև գործընկերային համագործակցության մասին» 2014 թվականի հունիսի 25-ի Հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) 4-րդ հոդվածը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1.

Հուշագիրը լրացնել հետևյալ խմբագրությամբ 2-րդ հոդվածով.

«Հոդված 2

1) Երկու երկրներում պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց մասնակցությամբ վերակազմակերպումներով (միացում, միաձուլում, առանձնացում,

բաժանում, վերակազմավորում) պայմանավորված պետական գրանցումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

2) Սույն հուշագրի 2-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետական գրանցումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պաշտոնական կայքի՝ համացանցի http://www.e-register.am հասցեում տեղակայված կայքի միջոցով:

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության աշխատակցին հնարավորություն է տրվում e-register.am համակարգի միջոցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում ստացած իրավաբանական անձի (անձանց) մասին տեղեկությունները գրառել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում (այլ մարմնի կողմից պետական գրանցում ստացած իրավաբանական անձանց մասին առկա տեղեկությունները գրանցամատյանում գրառման կարգով): Սույն կետում նշված գրառումը կատարվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային հայտն ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4) Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց սահմանված կարգով՝ e-register.am համակարգի միջոցով հարկ վճարողի հաշվառման համար չի տրամադրվում: Հարկ վճարողի հաշվառման համար նշված անձինք ստանում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված, ինչպես նաև վերակազմակերպման արդյունքում ընդլայնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական գրանցման վկայական (պետական գրանցման վկայականի հերթական ներդիր) գրանցամատյանում տեղեկությունների գրառումից հետո տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

5) Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված, ինչպես նաև վերակազմակերպման արդյունքում ընդլայնված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումների համար հիմք հանդիսացած փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը ողջամիտ ժամկետում փոխանցում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը: »

Հոդված 2

Հուշագրի «Հոդված 2», «Հոդված 3», «Հոդված 4», «Հոդված 5», «Հոդված 6» բառերը փոխարինել համապատասխանաբար «Հոդված 3», «Հոդված 4», Հոդված 5», «Հոդված 6», «Հոդված 7» բառերով:

Հոդված 3

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և Հուշագրի անբաժանելի մասն է:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի հունվարի 25-ին, երկու բնօրինակով, հայերենով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից՝
Նախարար	Նախարար
Արփինե Հովհաննիսյան	Արարատ Պանիելյան